Յանկալի էմեղ, որ Ս. Աթոռս կարողութիւն ունենար և անթաշակ աշակերտաց թիւն աւելցներ. ջերմագին կ'աղօթեմք և լի եմք յուսով, որ Աղգին շնորհիւ կարող պիտի լինիմք ապագային մեր սոյն խիստ ջերմ բաղձանաց հասնիլ։ Դպրոցիս տեսչութիւնը առանց զեղծումն պատճառելու, չէ կարող իւր կարգադրութեանց բացառութիւն ընել և կանոնէ ու ժամանակէ դուրս աշակերտաց ընդունիլ։ Ուստի ստիպուած է ինչպէս մինչեւ ցարդ եկողները ետ դարձնել, նոյնպէս և ապէ վերջը ապօրինի եկողներն ալ չընդունիլ։ Հարկ չէ ըսել որ Ս. Աթոռս տարապարտ տեղը, նոցա վերադարձի համար աւելորդ ծախքեր ալ ընել ստիպուած է։ Կը յուսամք որ կարգ և կանոն սիրողներուն եւ օրէնք յարգողներուն համար, մեր այս ընթացքը օգտակար կը թուի և իրաւունք չեն ունենար որ և իցէ մէկէ մը վշտանալու։

Կը խնդրեմք մեծարգոյ լրագրապետներէն, որ սոյն աղդը իրենց լրագրաց միջոցաւ ևս հրատարակել բարեհաճին 'ի գիտութիւն գաւառացի ազգայնոց։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամսոյս 15ին Յունաց նորընտիր Տ. Տ. Բոքոբիոս Ս. Պատրիարքի իշխանութեան վաւերացման և հրովարտակի ընթերցման հանդէսը խիստ շքեղապէս կատարուեցաւ Բդեշխի պալատին մէջ. հրովարտակը կարդացուելէն եւ նշանները զգենլէն վերջը Տաճկերէն, Դաղղիարէն և Յունարէն ճառեր կարդացուեցան։ Այն տեղէն իրեն համար պատրաստուած զարդարուն փառաւոր ձին հեծնելով բոլոր Յոյն միաբանութեան և խուռն բազմութեան հետ եկաւ Ս. Յարութեան տաճարի գաւթին արտաքին դրան մօտ իջաւ ձիէն. զգեստաւորեալ եկեղեցականք և զօրաց խումբ մը, որ այն տեղ կ'ըսպասէին. նմանապէս վանքերէն և հիւպատոսարաններէն եկող փոխանորդք և պաշտօնական անձինք դիմաւորեցին զնորին Սրբազնութիւնը. շքեղ թափոր մի կազմուած էր, որուն առջեւէն Հայաստանը արծաթեայ ափսէի մը մէջ Տէրութեան Հրովարտակը բարձրացուցած կը տանէր, զանկերը անդադար կը հնչէին և եկեղեցականք երգելով մտան 'ի տաճարն Ս. Յարութեան ուր հանդիսաւոր օրերու սովորական արարողութիւններէ զատ քանի մը ճառեր և Ն. Ա. Բարեխնամ Կայսեր Թանկագին կենաց համար ջերմ բարեմաղթութիւններ կարդացուեցան։

Նմանապէս Աշխարհամատրան տաճարին մէջն ալ երգերով ըստ իրենց ազգային սովորութեանց արարողութիւններ ևեւ հանդէսներ կատարելէ վերջը, բոլոր միաբանք և հանդիսականք ողջունեցին զնորը եւ նոյն հանդիսիս տարան 'ի Պատրիարքարան ուր վերստին բանախօսութիւնք եւ օրհնութիւններ կարդացուելով մեկնեցան հանդիսականք։

---

digitised by A.R.A.R.@